Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

6975

631.5
2-54

2011

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՄԲԱԿԻ ԿՈՄԻՏԵ

142

Բաֆրակաբույծի
Գրադարան

ԻՆՉՈՒ ՇԱՐՔՈՎ ՑԱՆՔԸ ԼԱՎ Է ՑՐԻՎ ՑԱՆՔԻՑ

ՀՈՂԱԳԵՏ Բ. ԶԵՑԳԼԻՑ
Եր 2002

631.5
Ց-59

631.5
Զ-54

630
Կ-Զե

ԻՆՉՈՒ ՇԱՐՔՈՎ ՑԱՆՔԸ ԼԱՎ Է ՑՐԻՎ ՑԱՆՔԻՑ

Ագրոնոմ Բ. ՉԵՅԴԼԻՑ

Ռուսերենից թարգմանեց Ա. ՇԵՐԵՆՑ

(I 03 / T 0653)

Թիֆլիս
Հրատարակություն Անդրկովկասյան Ռամբակի Կոմիտեի
1925

40414-42

23678-60

Թիֆլիս, տպարան «Զարիա Վոստոկ»-ի Ս. Ցուլուկիձեյի փ. № 4։
Գլավլիտ № 611—Տիրաժ № 3.000—Պատվեր № 1.582.

ԻՆՉՈՒ ՇԱՐՔՈՎ ՑԱՆՔԸ ԼԱՎ Է ՑՐԻՎ ՑԱՆՔԻՑ

Բամբակը ցանում են ցրիվ կամ շարքով։

Առաջին դեպքում, ցանքը կատարում են ձեռքով, ցանքի համար վաղորոք մշակված հողի վրա ու հետո հողը թեթև հերկում են արորով ու փոցխում։

Առաջին հայացքից թվում է, թե ցրիվ ցանքը անհամեմատ հեշտ է—սերմերը շաղ տուր հողի մեջ ու սպասիր մինչև քաղքը Բայց իրոք դուրս է գալիս ընդհակառակը։

Ցրիվ ցանքի դեպքում սերմերի մի մասը թաղվում են շատ խոր, մյուսները ընդհակառակը, իսկ մի քանիսները նույնիսկ դուրս են մնում։ Խորը թաղված սերմերը կամ կորչում են բոլորովին, կամ թե տալիս են շատ թույլ և դեղին բույսեր, որոնք հետո մեծ դժվարությամբ են աճում, իսկ պատահմամբ լավ պայմաններում ընկած սերմերը տալիս են հիանալի ծիլեր։ Այդպիսով **ցանքը ստացվում է խայտաբղետ ու անհավասար։**

Բամբակի ծիլերը ծլելուց անմիջապես հետո սկսում են աճել նույնպես և վայրի խոտերը, որոնք այնպես արագ յեն տարածվում, որ բամբակի թփերը կորսվում են նրանց մեջ։ Հենց այդ պարագային ամենքի համար պարզ կլինի, որ ցրիվ ցանքը բոլորին շատ հեշտ և պարզ եր թվում, **Բոլորովին անպետք է,** պետք է շատ ժամանակ վատնել, աշխատանք և փող ծախսել սեհրակացնելու (прореживать) և քաղհան տալու համար ու այնուամենայնիվ արդյունքը քիչ կլինի։

Ինչպես հայտնի է, բամբակի ցանքը սեհրակացնում են (прореживают) նրա համար, որպեսզի բամբակի թփերը ազատ լինեն ու իրարից հավասար հեռավորության վրա գտնվեն։ Ցրիվ ցանքի դեպքում այդ անելը շատ դժվար է և միշտ կպատահի, որ մի քանի թուփ նստած յեն շատ խիտ, մյուսները նոսր, իսկ տեղեր կան, որ մնացել են բոլորովին դատարկ։ Եդ տեսակ անհա-

վասար ցանքի դեպքում արդեն շատ դժվար է հողի փխրումը բրչով, թորխով (мотыга), վորը շատ անհրաժեշտ է բույսի ուղիղ աճելու և լավ բերք տալու համար։

Վերջը կտեսնենք, վոր **շարքով ցանքը անհամեմատ լավ է ու բոլորովին էլ դժվար չէ։** Ցաքանով կամ արորի կրկնակի անցումով լավ հարթեցրած ու տափանով տափանած դաշտի վրայով անցնում են փայտե «նշանացույցով» (փոցխի նման գործիքվորի մատները թվով 3-5, գտնվում են իրարից 1-1½ արշ. հավասար հեռավորության վրա, Բամբակարույծը նշանացույցի նշանակած գծի վրա 1 վերշոկ խորությամբ փոսիկներ է շինում իրարից 4-5 վերշոկ հեռու և այդ փոսիկներում զցում մի քանի սերմ ու թեթև ծածկում նրան հողով։ Եդ տեսակ ցանքի համար դեսյատինի վրա ծախսվում է 1½ փթից վոչ ավել սերմ, մինչդեռ ցրիվ ցանքը պահանջում է 3-5 փութ, բացի դրանից, էլ կարիք չի լինում ցանքը փոցխելու—ուրեմն տնտեսվում է թե աշխատանք և թե սերմ։

Շարքով ցանքը կարելի է անել նույնպես բամբակի հատուկ շարքային սերմացան մեքենայով, վորի տեսակները շատ են։ Մեզանում պահեստներում և ագրոկայաններում (агропункты) հաճախ պատահում են «Բաններ»-ի սերմացան մեքենաներ (сеялка Баннера), այդ մեքենան շատ պարզ է և ամեն վոք կարող է հեշտությամբ աշխատել։

Այդ սերմացան մեքենան կարելի է հարմարեցնել ամեն մի խորության։ Նրա միջոցով սերմերը թաղվում են հավասարապես և ուրեմն տալիս են հավասար ծիլեր։ **Ցերեկ նույնիսկ առաջանում է հողի կոշտ կեղեվ, այնուամենայնիվ ծիլերը ավելի հեշտությամբ են ճանապարհ բացում և դուրս գալիս, քան թե ցրիվ ցանքի ժամանակ։**

Ծիլերը յերևալուց հետո անհրաժեշտ է նրանց խնամքով սեհրակացնել (прореживать) դրանից հետո բամբակարույծի ամբողջ ուշադրությունը պետք է ուղղված լինի շարքամիջը թորխելու, բրելու և վայրի խոտերը հեռացնելու վրա։

Ցերեկ շուտ շուտ թորխել եվ ժամանակին հեռացնել վայրի խոտերը, կարելի է համեմատաբար քիչ անգամ ջրել, իսկ ջրի պակասության ժամանակ **նույնիսկ ազատել ցանքը չորանալուց,** վորովհետև նկատված է, վոր լավ փխրած հողը իր մեջ շատ լավ է պահում ջրի պաշարը և յերկար ժամանակ է ծառում թաց։

Շարքով ցանքի ժամանակ շարքամեջը մշակելու համար գործ է ածվում հաճախ «Պլանետ» կոչված հատուկ արոր—թորխ։ Այս մեքենան լծում յեն առհասարակ 1 ձիով բայց ձին կարելի է փոխարինել յեզներով։ Այս վերջին դեպքում հերկվող շարքամիջով գնում է մշակը մեքենայով, իսկ յերկու հարևան շարքամիջով գնում են յեզները։ Վորպեսզի յեզները թփերը չկոխկրտեն, գործ են ածում հատուկ լուծ, վորը սովորական լծից յերկար է և հարմարվում է շարքամիջի լայնության։

Մի այդպիսի «պլանետ» մեքենայով կարելի է որական 8—12 մշակի աշխատանք կատարել նայած դաշտին։ **Ուրեմն մեքենացերով աշխատանքը անհամեմատ եժան է նստում, քան թե ձեռքի թորխերով (հողուրաքով)։**

Համեմատենք, թե վորքան բանվորական որ և հարկավոր մեկ դեսյատին ցանելու, սեհրակացնելու, բաղհան տալու և հողը փխրելու համար։

Ցրիվ ցանքի դեպքում	Շարքով ցանքի դեպքում
Ցանք և ցաքանել բանվ. 1	Ցանք սերմանիչ մեքենայով....
...1 ձի.... 2	բանվ.... 1 ½ բանվ.....1
	ձի.....1
Ծիլերի սեհրակացնելը	Ծիլերի սեհրակացնելը....բանվ. 3
բանվ..... 3	շարքամեջի հերկումը քաղհանիչ
քաղհան և թորխանք 4 անգամ	մեքենայով ամառվա ընթաց-
ամառվա ընթացքում.....	քում 3 անգամ..... բանվ.....3
բանվ..... 50	½ բանվ..... 3
	ձի..... 1
	Վայրի խոտերի հեռացումը
	թփերի մոտից 4 անգամ.
	բանվ..... 20
ընդամենը բանվ. որ..... 54	ընդամենը բանվորով..... 29
ձիու աշխատանքի որ.... 2	ձիու աշխատանքի որ..... 4

Զանազանությունը մեծ է։ Շարքով ցանքը, ինչպես տեսնում ենք պահանջում է անհամեմատ քիչ մշակ, վորոնց պետք է վարձել բավական թանգ գնով, յերբեմն նույնիսկ մեծ դժվարությամբ։

Ցերը ցանքը կատարվում է շարքով և մեքենաների ոգնու-

թյամբ, միշտ կարելի է լինում հեշտ կերպով վոչնչացնել հողի կոշտ կեղևը, վորը գոյանում է ծանր հողերի վրա ջրելուց կամ անձրևից հետո։ Իսկ դա մեծ նշանակություն ունի, վորովհետև հողի կեղևը արևի տակ չորանալով, սեղմում է բույսի ճիւղերը, ճնշում է նրանց և արգելում է նրանց աճելը։

Պետք է հիշել նույնպես, վոր շարքով ցանքի դեպքում, թփերը բավական ազատ տեղ ունեն իրենց զարգանալու համար, լավ են լուսավորված արևով, լավ են ջրվում և լավ սնունդ առնում հողից, ուրեմն թփերը միաժամանակ և համեմատաբար շուտ յեն ծաղկում ու հասնում։ **Բերքը միշտ հաջող է լինում ցրիվ ցանքի բերքից եվ բամբակը անհամեմատ լաւ**, այսինքն բերքի մեծ մասը կազմում են թանկարժեք տեսակներ։

Բանբակի ցանքերը յերբեմն վնասվում են զանազան հիվանդություններից (որին. չոռ, ժանգ և այլն) և վնասատուներից (միջատներ և այլն) հիվանդությունները ավելի շատ յեն տարածվում վատ մշակված, խիտ և խոտերով ծածկված դաշտում, այսինքն զլխավորապես ցրիվ ցանքի դեպքում։

Այդպիսի ցանքի կանոնավոր բժշկումը համարյա թե անհնարին և, այդ պատճառով յեթե ցանքը ծածկվում է վնասատուներով, նա կորցնում է բերքի մեծ մասը, յերբեմն նույնիսկ ամբողջովին։

Ընդհակառակը, յերբ ցանքը շարքովի է տերը հնարավորություն ունի ամառվա ընթացքում 2-3 անգամ շարքերովը անցնել և թփերի վրա ծծումը ցանելով կամ զանազան դեղեր սրսկելով նրանց բժշկել, լավ հավատացած լինելով, որ եդ արած ծախսը ամբողջովին կվարձատրվի։

Վերջապես շարքով ցանքի դեպքում բամբակի հավաքելը եժան է նստում, քան թե ցրիվ ցանքի ժամանակ։

Մի դեսյատինի համար պետք է լինում ավելի քիչ մշակ, վորովհետև բամբակ հավաքելը ավելի հեշտ է շարքերը անցնելով, քան թե ցրիվ թփերը կոխկրտելով։ Բացի այդ շարքով ցանքի դեպքում ճիւղերը չեն կոտրատվում և բամբակի մի մասը չի փչանում գետնին թափվելով։

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր ամեն մի կողմից շարքով ցանքը անհամեմատ լավ է ցրիվ ցանքից և բամբակարուծին տալիս է հետևյալ արդյունքներ.

1. պահանջվում է համեմատաբար քիչ սերմ։

2. սերմերը տարածվում յեն հավասարապես ամբողջ դաշտի մեջ և թաղվում են հավասար խորության մեջ այդ պատճառով հենց ծիլերը աճում յեն միաժամանակ։

3. ուժեղ ծիլերը հեշտ են անցնում հողի կոշտ կեղևը և չեն ծածկվում վայրի խոտերով։

4. Անհամեմատ հեշտ է և եժան է նստում հողի փխրումը և քաղհան տալը, վորը մեծ նշանակություն ունի հողի թացությունը պահպանելու և բույսի լավ զարգացման համար։

5. Անհամեմատ բազմանում է բամբակի բերքը է հեշտանում նրա հավաքելը։

Դժվար է թվել շարքով ցանքի լավ կողմերը, դա նույնիսկ ավելորդ է, վորովհետև ով գոնե մի անգամ բամբակը ցանի շարքով, լավ կիմանա թե վորքան շահ արած կլինի։

Բամբակարույծ, յեթե ուզում ես քիչ փող ծախսել, լավ ոգտագործել աշխատանքդ, հարուստ բերք ստանալ և լավ ծախել, **բամբակը ցանիր շարքով**։

Շարքով ցանքի վերաբերյալ անհրաժեշտ մեքենաներ և ցուցմունքներ ստանալու համար, դիմիր մոտակա ագրոկայանը (агропункт)։

Ռ. Զեյգլից

ԲԱՄԲԱԿԱԲՈՒՅԾԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Անգրկովկասյան Բամբակի Կոմիտեն հրատարակել է հետևյալ գրքույկները

I. ԲԱԺԻՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԽՆԱՄՔԸ

№ 1. *Բամբակենիի պարարտացնելը բերքի առատացման նպաստավոր պայմանն է*—**Պ. Մեդվեդև։**

№ 2. *Ինչ է հարկավոր իմանալ բամբակագործին ջրի մասին, վորպեսզի ստանա լավ բերք*—**Ինժիներ Գ. Մանուչարով։**

№ 3. *Ինչու շարքով ցանքը լավ է ցրիվ ցանքից*—**Ագրոնոմ Ռ. Զեյդլից։**

№ 4. *Ինչու է անհրաժեշտ հողի փխրումը բամբակի մշակման համար և ինչպես է կատարում նրա օգուտը*—**Ագրոնոմ Ա. Պոլգուսին։**

№ 5. *Ինչ ֆլաս են հասցնում վայրի խոտերը և ինչպես նրանց հետ կռվել*—**Պրոֆ. Պ. Ժուկովսկի և ագրոնոմ Ե. Կլեյն.**

№ 6. *Բամբակաբույծ հիշիր Լենինի լոզունգը՝ «Լավ է քիչ, բայց լավ»*—**Ագրոնոմ Ն. Տարասինով։**

II. ԲԱԺԻՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

№ 1. *Կնգուղի վորդը—բամբակաբույծի ամենամեծ թշնամին է*—**Էնտոմոլոգ Յա. Պրիցց,** *հանրամատչելի փոխադրությունն ագրոնոմ* **Ե. Կլեյնի։**

№ 2. *Ինչ բան է չոռը և կռիվ նրա հետ*—**Պրոֆ. Ք. Զայցև։**

№ 3. *Ինչպես կռվել բամբակենու վոճիլի հետ*—**Էնտոմոլոգ Ն. Սուխանգելսկի։**

ԱՄԵՆ ՄԻ ԳՐՔՈՒՅԿԸ ԱՐԺԵ 10 ԿՈՊ.

Անդրբամբակոմի գրքույկները կարելի է ստանալ շրջանային ագրոնոմներից և մոտակա գործարաններից կամ գնման կայարաններից։

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

6975

<< Ազգային գրադարան
NL0078934